

Կը հրատարակուի ամէն կիրակի օրեր :
Ճարեկանն է կոմիտիէ Ա. տատին՝ Եւթանոքայաբլեան հո-
ւար Սէ. Եւթանեան Եւթ. Իսկ Բ. տատին՝ Եւթանոքայաբլեան
համայն կէս Եւթանեան Եւթ. Իսկ Բ. տատին՝ Եւթանոքայաբլեան
համայն կէս Եւթանեան Եւթ. Իսկ Բ. տատին՝ Եւթանոքայաբլեան

Եւրոպական քաղաքաց համար 30 Գրանդ ,
Համար 40 փառա .

Դամոն կամ գրութիւն պէտք է ուղղել առ Բժշագիր-Տնորէն Մ.
Գալիա Եանկան Յիւնամանկար եղբայր։ Աղղը խան Մ. Էփ. Նիկողոս-
եանի Տպարանը կամ Գոնէի դարձ քրտիման Պողոս եւ Յակոբ առ
գտնից խանութը :

Անգճար ծրար եւ նամակ կը մեղմուէին: Առաջիկայի եւս չի արուիր: Դժուարեամբ տողը մէկ սակամակ համար 3 զը: Է: Առեկի անցումը
հերոս համար սակարկութիւնն կրկնար:

666

ᐃᑦᑲᑦᑯᑦᑭᑦ

4887 300.61.0 24

ԲՈՒՄՆԳԱԿՈՒԹԻՒՆ.

Արհամատեմբն եւ Մարտի. — Մոռում
պէտք է. — Յիշատակ. — Ի Ֆիլոսոփիա.
— Բարոյական առանձնեք. — Ուղեւորութիւն.
— Դարապէտ (Ինչ պատմեց ինձ
Դրիդաք). — Մեռածներու դէպք. Տարե-
գումար Հասարակական Հայկական Կրթա-
թանի. — Կնային բժշկութիւն. — Զուար-
ճակիք. — Պաշտօնական. — Ազգային.
— Վէպ (Ժողովուրդային ընտանիք՝ զգր-
ված իմով.)

ՄԻՋԱՄՏԱՌԻԻՆԵ ԵՆԱ ՄԱՍԻՍ

Կիրակնօրեայ Հայրենիքի եր-
բօրէ (ժուպն մէջ) բացատրեցինք Թե-
ոքաբանի Գործը մէջ վարչական
միջամտութեան զնաանկորութիւնն
սկզբան տեսակետով:

Կատար — նկատմամբ ազդույին
դորժող — պետք է վայելի իւր դը-
նու և կարծիք յայտնելու ապաստ-
միւնն Երկրին օրինաց ներած առ-
մանին մ(ջ) և վերադարձմով մամուլ
ազդատվեան — որ իր ծաղ ուժը
կառնու առհմունադրական սկզբուն-
քէ — վարչութիւն մը պարտաւոր
նկատելու չէ զինք միջամտութիւն
ի դորժողներու :

Լրագիրք պետք է արտատրեն
 յայտնեն խրատնոց կարմիրք նկատ-
 մամբ ազգային դործոյ ու խնդրոց
 իւրաքանչիւրն իր ուղղութեան և նը-
 շանարանին համեմատ նպատաւոր
 կամ աննպատաւ խօսելով, և այսպիսի
 պարագայի մէջ վարչութիւն մը եր-
 կինդ կրեյու բնաւ պատճառ չունի,
 եթէ իւր դորմեր ազգայնոց կամ
 ազգային շահոց համաձայն են, ո-
 րովհետեւ ընդդիմախօս լրագիրն կը
 կորսնցնէ իր դիրք ու ազդեցութիւ-
 նը առաջի Հասարակաց կարծեաց :

Իսկ նթէ վարչութեան մը գործերը բարձրեցնելու արարչական միջոցներով, և սակայն լրագրութեան միջոցով և իրարմէն, ինչպէս լրագրութեան գործերը կը

Կարոնցուհին խրեանց դիրքն քաւադ
դեցուծ բռն աւաճի հաւարակոյց
կարծեաց :

Եկաւ պարագայից մէջ ալ արիւն
նահեւերը տեւեռած ինձ :

Լեփե լրագիր մը կը խեղաժխտէ
 քործերն և իրողութիւնները : Եթէ
 տղային շահուց անհամաձայն ըն-
 խաղքի մէջ կը գտնուի և կը դրոշմ-
 հանրային կարծիքը : Եւրիշ լրագիր
 մ'ալ կրնայ ճշմարտութիւնը պաշտ-
 պանել, աստիճանը խայտառակել
 և խեղաժխտութիւնն ապացուցանել :

Կարճ խոսքով՝ հաստատված Կարճիկը պետք է գտնուի մեր բոլոր տղաների:

Իսկ վարչութիւնն մ'հրր ինք մի-
ջամասութիւն ի գործ գնէ — ուրան
սլ պատկառելի, ազգեցիկ և գոր-
ծունեայ իննի — բարոյագէտ կ'ընկնի
իւր բարձրութենէ, ինչպէս նախորդ.
Պատկ. Կրօնական Ժողովը իրագրա-
կան գործոց մէջ իւր շտաբն և զը-
րեմէ անվերջանայի միջամտութեանը,
որամառաւ գմբադդ — բար բարոյա-
պէս ինկած էր, այն կրօն. մօղովը
կրօնէք, որ — ներսի մեզ ըսել —
հարժեւ հաւատաքննական ատենանի
գէրս ստանձնած էր:

Հին զերքեր բռնալու համար չէ
որ կը միշենք սոսա անցեալ ժն, այլ
մերժեալու համար սկիզբունք մը որ
նշմարեա չէ, քիստակար է:

Այս տեսակէտով անշուշտ ցու-
պիտի պատճառէ ընթերցստէր ազ-
գայնոց Ա. Արմիարեան էֆէնտի
Պատիս իմքադուծենէ հրաժեշտը,
որ առաջ եկած է վարդուծեան ի
դորձ դրած միջամտութեան պատ-
ճառաւ :

Անկեղծութիւնն յարգելու և
յարգել տալու համար պարտինք
յայտնել թէ այսօրուան ճշման հե-
ղինակները Արիւտար էֆէնտիի ջերմ
պայտացաններն ու բարեկամնէրն էին
երբ ՂԵՀ. Մակար Սրբապետի կաթո-
ղիկոսութեան խնդիրը կը լուրսէր,
և յայնժամ Արքիւտար էֆէնտի տար-
բեր սճով մը չէր գրեր:

Ձեր խնդրոյի ստեղծելով իմ հետք
Արթուր Էֆենտիկի եւ պատահաբար
չսխալեալ բնագործի կը գրեմք մեր
յայտացածն սկզբունքի խնդիր է,
և տկարանքի խնդիր ուղարկուն հա-
մար կըսենք իմ՝ վերջին Արթուր
Էֆենտիկի ընկալցող պէտք էն յա-
սում պատահաբար վարչութեան:

Ի՞նչ տեսածի արդարութեան է այս
Սոս ալ ուրիշ ինչո՞ւր է, որ վե-
րիցած չէ և չկրնար վերսկիւ մեր և
Հասարակաց կործեաց ուշադրու-
թեանէն :

ሆገ በሐህ ጥይቶች ናቸው

Էսանդ և աղդ սփռու թեանն ա-
ղին՝ որ Էրբեմի հյլ փայլէին օրանե-
րու մէջ և վառ էին, Կրթիթէ մեռե-
լութեանն առաքեանն իմպոյժ են ալս
Փր 1

է՞ր այս յանկարծական փոփո-
խութիւն մեր մէջ, ինչո՞ւ վերստին
կոկոխ ախրել տնտաբերութիւնը,
ինչո՞ւ հարուստն — որ երբեմն կը
բանաթ իւր սրտին հետ և իւր քսա-
կը — տակաւ կոկոխ մեկուսանալ,
ինչո՞ւ Ժայգիւրդն — որ երբեմն կը
վարձէր պարտաճանաչութեան և կը
հետաքրքրուէր կենսական հարցե-
րով — նորէն կոկոխ թմրել, ինչո՞ւ
եկեղեցական մարմինն — որ երբեմն
անձնութեան թեան և դորձունէութեան
փորձեր կընծայէր — այսօր
քաշուած կուգէ ապրիլ, ինչո՞ւ զը-
րադէտն — որ երբեմն ընթերցողաց
նախնիք կը բորբոքէր իւր խոհերով
— այսօր զրիկը լքաներ ու ինք
կզգիւցներ է. և վերջապէս ինչո՞ւ,
ինչո՞ւ . . .

Բայց վերջը չառնաիր այդ Բաներու, որ բազմութիւն են. և ինչ որ կերեւի այսօր՝ թմբու թիւն, անտարբերութիւն է — մեռելութեան պատուանդանք:

Եւ եթէ չգտնուէին Միացեալ, Խորհանու, Ազգանուէր Հայուհեաց և Դպրոցասէր Տիկնանց Ընկերութիւնք — թէ և անոնք ալ այժմ գրեթէ մասամբ լքեալ — շարժունութեան հետք բնաւ պիտի չնշմարուէր ի մեզ: Հակառակ սակայն ևս քան զևս ընդհանրանալու վրայ եղող թմրութեան և անտարբերութեան, կայ մարմին մը, որ չէ լքեալ տակաւին և որ գուցէ սակայն լքանի ու մեկուսանայ, եթէ գործունէութեան առաջ խոչընդոտներ ծագին:

Այդ մարմին Հիւանդանոցի Հոգաբարձութիւնն է, որ իբր յոր տարի առաջ հանդիսաւորապէս իւր ստանձնած պարտականութիւնն — ըկատմամբ յիշեալ հաստատութեան վերաջինութեան մեծ գործին — ի գործ դնելու փութալանութիւն ու եռանդ ցոյց կուտայ: Եւ ահա ազգային բարձրագոյն մարմնոյ մը կողմանէ իւր առաջ «հեռախօս» խնդիր մը կը դրոյր, այն է, Հիւանդանոցի վերաջինութիւնը նկատելով իբր ընդհանուր Ազգի պատկանող գործ պարտի կրտսէ՝ ընդհանուր Ազգը մասնակցիլ նորա ծախսոցը, մինչդեռ Պատ. Հոգաբարձութիւնը կուզէ և կը փափայ իւր եւ ուրիշ մեծատանց նշանաւորութեամբը վերջացնել զայդ գործ՝ խորհելով անշուշտ թէ ժողովուրդն մեծ մասամբ անկարող է դժբաղդաբար, ուստի այս պատճառաւ չուզէր բեռ մ'ալ անոր վրայ աւելցնել:

Ստուգիլ մեծանձնութեան գործ մ'է այս, զոր կը խորհի Հոգաբարձութիւնն Ազգ. Հիւանդանոցի:

Կար ժամանակ մը յորում Հայ-մասունքն առհասարակ ցաւ ու վիշտ կը յայտնէր ընդհանրապէս Հայ մեծատանց անտարբերութեանը մասին՝ գանգատելով թէ սոքա Յոյն մեծատանց օրինակին չեն հետեւիր:

Բայց ո՞րքան տարբերութիւն նոյն ժամանակի և արդի Հայ մեծատանց ունեց միջև:

Այժմ Հիւանդանոցի Պատ. Հոգաբարձութիւնը գլուխ կանգնելով մեծագործութեան մը՝ կուզէ իրմէ դուրս մնացած հարուստներու օժանդակութեամբը կատարել վերաջինութեան գործն՝ և ահա նոր խնդիր մը երեւան կուգայ, որ կրնայ մարել յիշեալ Հոգաբարձութեան եռանդն ու աշխոյժը, եթէ բարեբաղդաբար իրենք հաստատաւոր և սկզբունքի տէր անձինք չլինին:

Բուն սկզբունքի խնդիրը մեզի համար է սա թէ՛ Հայ մեծատունք պէտք է փայլին մեծագործութեամբ, և ժողովուրդն իւր ընկած բաժինը կատարած կը լինի, եթէ առ տէրութիւնն իւր տուրքերը վճարէ, իւր ընտանիքն ու զաւակները պէտք ե-

ղած կերպով խնամէ, եթէ առ Հիւանդանոցի գանձանակն, Կեդր. Մետուկն և առ իւր թաղի Եկեղեցին ու վարժարանն իր պարտոցը մէջ չվերանայ:

Ազգ. վարչութեան անկէ մը՝ զում տալ Ազգ. Հիւանդանոցի Հոգաբարձութեան փափաքին՝ որ բանաւոր է ու զնահատելի, աջակցիլ նմա իւր բարոյական զօրութեամբն և օժանդակել՝ փութացնելով ինչ որ կը վերաբերի չի. նութեան գործին անյապաղ սկսմանը, և իսկոյն վերջացնել բանակցութիւնն. եթէ տակաւին չէ վերջոյժ իւր և յիշեալ մարմնոյ միջև:

Մենք այնպէս կը հաւատանք թէ վերաջինութեան սկզբնաւորութիւնը զովելի եռանդ ու շարժում պիտի պատճառէ Ազգին մէջ:

ՅԻՇԱՏԱԿ

Ուշագիւր անձինք խորին դժգոհութեամբ կը նշմարեն կարգ մ'անձանց՝ պաշտօնական թէ անպաշտօն՝ ջանքերն որք կը ծառայեն նսեմացնելու յիշատակն հանգուցեալ Ներսէս Պատրիարքի:

Ողջամտութիւնը կը յարգենք ըստ ամենայնի, բայց վրիժառութիւնը կատենք ոգուով չափ մանաւանդ այն պարագային՝ յորում չը փայլի արդարութիւնը:

Հանգուցեալ Ներսէս Պատրիարք ունեցած է իւր պաշտօնավարութեան մէջ քննադատելի գործեր, զորս մենք պատշաճից սահմանին մէջ քննադատած էինք իւր իսկ կենդանութեանը:

Բայց անուրանալի է թէ Ներսէս Պատրիարք ունեցած է նաեւ գնահատելի գործեր, զորս որքան ալ ուզեն սքծղել ու նսեմացնել, անկարելին կը գործեն, որովհետեւ կարելի չէ հաւատացնել ժողովուրդին թէ սե է, ինչ որ իրօք ճերմակ է:

Այս տեսակ ջանքերու հեղինակներն — եթէ կան արդարեւ — ուրիշ բանի չեն ծառայել, բայց միայն բարոյական դատապարտութեան սե գիծ մը թողելու իւրեանց ետեւէ՝ նսեմացնելու համար իւրեանց համբաւը, որ պէտք չէ նսեմանայ, զի իրենք ևս ունեցած են օգտակար գործեր ինչպէս ունին նաեւ ազգասիրութիւն և արժանիք:

Հետեւաբար — անշուշտ ողջամբողջութեամբ խորհելով — բնաւ պատճառ չունին Ներսէսի յիշատակը նշանաւորելու, որ իրենց փառք չմատակարարէր երբէք:

Ճշմարիտ փառքը գործերու արդիւնք է:

Միւլթարական պարագայ մ'է որ ժողովուրդը տակաւին կը յարգէ Ներսէսի յիշատակը իւր այն գործոցն համար՝ որ ընդ գրուանաւ չեն:

Արդ, քանի որ ժողովուրդն կը կրէ երախտագէտ ոգի, պարտ է ջանալ վառ և կենդանի պահելու նորա այս զգացումը, որով անտարակուսելի է թէ սա — ժողովուրդը — պիտի յարգէ նաեւ յիշատակն այն Պատրիարքաց և այլոց, եթէ ունենան օգտակար գործեր:

Անհերքելի է թէ Վեհապետեան Ամեն. Տ. Յարութիւն Պատրիարք ունեցած է իւր օգտակար գործեր, որք չպիտի մոռցուին (1):

Ազգային գործոց գլուխ կեցող անձինք պարտին օգուտ քաղել ժողովուրդին բարոյական վիճակէն և նորա բարեյօժար տրամադրութիւններէն, որ քաջալերիչ են և յուսատու:

Ի Ֆ Ի Լ Օ Ր Ի Ա

Ազգ. Հիւանդանոցի Պատ. Հոգաբարձութիւնն իւր հսկողութեան և խնամոց յանձնեալ 700ի չափ պատասպարեալներն հայրական ազնիւ գործով խնամելէ և անդ Որբանոց վարժարանի 250 աշակերտաց բարւոք և հիմնական կրթութիւն մը տալէ զատ՝ փափաքելով նաեւ չգըրկել զանոնք բնութեան գեղեցկութիւնները վայելելէ, այս անգամ իւր քսակէն դաշտային դրօսանք մը կազմաւորեց ի պատիւ յիշեալ աշակերտաց, որք անցեալ կիրակի օր առաջնորդութեամբ նոյն Հոգաբարձութեան անդամ և Ատենադպիր Ֆէնէրճեան Մեծ. Յովակիմ Էփէնտի՝ առաւօտեան ժամը 12ին Նէաի-գուլէէն կառախմբով գացին ի Ֆիլօրիա և անդ մինչև իրիկուն զուարճացան:

Սեղանին վրայ աշակերտք առ վեհ. Սուլթանն ուղղեալ երգ մը երգեցին, սրտագին բարեմաղթութիւններ ըրին վասն թանկագին կենաց և հանապաղ բարօրութեան Ն. Կ. Վեհափառութեան, վասն ազգային զարգացման և յայտնեցին ջերմ և խորին շնորհակալութիւններ առ Պատ. Հոգաբարձութիւնն, որ ստուգիլ նախախնամական պաշտօն մը կը կատարէ և բնաւ զգացնել չը տար իրենց թէ իրենք մեծ մասամբ որբեր են:

Սոյն դաշտային դրօսանք համայն ներկայից վրայ — Հոյ և օտարազգիք՝ որ բաղմամբ իւր էին — խիստ լաւ տպաւորութիւն ըրաւ և ամեն

(1) Ն. Սրբազնութիւնն իւր անձնականէն 8,000 ոսկի ծախսելով կալուածներ չինել տուած է Երուսաղէմայ համար:

դած էր որպէս զի նորա հարստութիւնը դադարեալ մը ունենար . բայց ո՞ր գիտէ թէ Արտէմ իբր պատրուակ չէր գործածեր այդ « հօր յիշատակը » ուստի Լեւոն պատասխանեց .

— Եթէ քու հօրդ յիշատակը որ այնքան յարգելի է ինձ որքան քեզ , կը նըկըրտի թոյն խառնել մեր կենակցութեան , կարճամարհեմ ես այդպիսի յիշատակ մի , բայց , Արտէմ , պատրուակ ես ատոնք , դոչեց Լեւոն ու ժգլին . — Հօրդ յիշատակըն չէ որ խնայել կուզես դու . . .

— Հապա ի՞նչ բան , ըսաւ Արտէմ յուզեալ :

— Պատե՛ն՝ի :

— Ինչպէ՛ս :

— Տե՛ս Արտէմ , կը սիրես զիս , վըստահ եմ , սակայն երբ տեսնեմ թէ տետրակի ձեւ բան մը կայ զոր ինձոյ ծածկել կը ջանաս , եւ որ սիրահարական նամակներու իբր թղթապահ կրնայ ծառայել՝ չեմ կրնար չկասկածիլ . . . եւ դքեղ չարհամարհել :

Կիները կըսէ վիտատուն մը աւելի սիրուիլ կուզեն քան թէ սիրել : Արտէմ երբ լսեց Լեւոնը որ կարճամարհէր զինք , դողաց , ուրեմն Լեւոն չէր սիրէր զինքն , իւր արժանապատուութիւնն զգաց թէ վիրաւորեալ էր , կարծես պիտի նուաղէր իւր յուզման ու ցասման մէջ . սակայն քաջութիւն ունեցաւ իւր կթոտն սրբունդներով ինքզինք իւր մօր սենեակը նետել , բացաւ մեղմիւս սնտուկն ու դուրս քաշեց թաշկինակի մէջ ծրարուած տետր մի որ կը նմանէր հին ձեռագիր մատենի մը , շտապաւ տարաւ զայն Լեւոնի , անոր երեսին նետել ուղեց եւ գոչել « ես գիտեմ իմ պատիւս պահել » բայց իւր խոհեմութիւնն չը ներեց իրեն զայդ բան , ուստի պարզապէս յանձնեց զայն անոր եւ սենեկէն դուրս ելնելով ուրիշ խուց մը մտաւ . — սկսաւ արտասուել իւր հեծկտանքներն խեղդել ջանալով որպէս զի չի զարթնուր մայրիկն : Հարուածն՝ զոր ընդունած էր նա իւր սրտէն՝ այնքան աւելի ծանր կը թուէր իրեն որքան կը տըրամախոհէր անոր վրայ . վէրքը երբ նոր է չէ շատ զգալի եւ իւր ցաւն հետզհետէ կը սաստկանայ միայն . Արտէմ յուսահատ մտածութեանց մէջ ընկզմեալ էր եւ կըզգայր թէ իւր սիրտն՝ որ Լեւոնի սիրտին չիմուած էր՝ քայքայելու մերձ էր . կը յիշէր անոր երբեմն գգուանքներն եւ ներկայ նախատիքն , սէրն ատելութեան վրտուած էր ուրեմն : Ա՛հ , այդ ատելութիւնն պիտի դոյութիւն չունենայ երբ անմեղութեանս վերահասու լինի , բայց մտածել թէ նա կրցած է կասկածիլ . . . կըսէր Արտէմ մտովի , պահ մը յետոյ ելաւ կանգնեցաւ , անհամբեր էր լսելու Լեւոնէն թէ « անմեղ » էր ինք , այո՛ , կուզէր որ Լեւոն խոստովանի զայդ , ուստի մեղմիւս իջաւ վար , այն սենեակին ուր Լեւոն կը գտնուէր , բայց նա չէր ընթեռնուր , գլուխն կըած էր այդ տետրին վըրայ , այդքան հետաքրքրութեամբ սպասուած բան մը որքան շուտ կարելի եղած էր քննել , զի հազիւ տասը վայրկեաններ գլորած էին , կը ներհնէր ուրեմն , Արտէմ նախ ուղեց չը մերձենալ անոր ինքզինք

վշտացեալ ցոյց տալու համար , բայց կըրնար զայն այդ վիճակի մէջ թողուլ , « Լեւոն » ձայնեց յուշիկ ու քաղցրիկ ձայնով որոյ իւր դողն կուտար հեշտալուր թրթռացում մը , Լեւոն չէր զարթնուր . քայլ մ'ալ առաջացաւ , « Լեւոն , Լեւոն , Լեւոն » գոչեց մին քան զմիւսն ու ժգլին . բայց . . . Լեւոն պատասխան չէր տար . Արտէմ որոշելու հարկ չունեցաւ խելոյն Լեւոնի քով խոյանալու համար , բռնեց անոր ձեռքն որ սառած էր . « Լեւոն » գոչեց իւր բոլոր դորութեամբ , բայց չէր զարթնուր նա :

Հրեշտակապետային մողը միայն կըրնար արթնցնել զայն ,

Արտէմ խելակորոյս անկաւ բազմոցին վրայ . Գոհար տուտու իւր աղջկան ճիչերէն անաբէկ , զարթեալ եւ յիշելով նախորդ զիշերուան շան կողմանձումը , գլուխը շարժեց եւ խելոյն վտեթաց Լեւոնի ու Արտէմի սենեակին , 'ուր քիչ յետոյ հասաւ սպասուհին . հակառակ այն սարսափին զոր իւր մայրենի սիրտն զգաց ի տեսիլ իւր երկու նուագեալ որդւոց , իւր հին ժրագլուխ տան տիկին , արիաքար նախ իւր աղջկանը օգնութեան հասաւ . ջուր սրսկեց նորա երեսին , դուռ ու պատուհան բանալ տուաւ որպէս զի օդոյ հորցանք մը տեղի ունենայ , բացաւ Արտէմի կուրծքն ու անոր բազուկներն շօշափեց , այն ատեն Արտէմ յուշարեւորութեան նշաններ ցոյց տուաւ , եւ Գոհար տուաւ , որ ոյժ դարձած էր համակ , սրացաւ Լեւոնի մօտ , անոր ձեռքն իւր ձեռաց մէջ առաւ , սառած էր , արձա՛նացեալ մնաց առ վայր մի , յետոյ ինքզինք գտնելով՝ իբր յետին փորձ՝ հրամայեց սպասուհւոյն որ երթայ բժիշկին կոչէ , բոլորովին յուսահատ չէր դեռ .

(Ետքահանգէլ)

ՄԵՏԱՍՆԵՐՈՂ ՏԱՐԵԴԱՐՁ

ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱՐԱՆԻ

Հանդէսն , ըստ կանխադրոյն ծանուցման , պիտի կատարուի յառաջիկայ Յունիս 28 կիւրակէ օր :

Շիրքէթի խայրիէյի 21 թիւ շոգեհանն իւր սուսուօս ճիշդ ժամը 12 ին պիտի մեկնի Կամուրջէն եւ հետզհետէ հանդիպելով Քաարքէօյ , Պէշիկթաշ , Գուզկուլնճուգ , Օրթաքէօյ Գուրու չէյմէ , Բուսթիլի Հիսար , Պոյաճըքէօյ եւ Եէնիքէօյ պիտի երթայ ուղղակի Եէնի մահալէ՛ աւելից հանդիսականք պիտի առաջնորդուին մերձակայ Թահիր աղայի դեղեցիկ պարտէզն , որ սահմանուած է իբրեւ հանդիսավայր :

Կէս օրին ճաշ պիտի տրուի առաւել քան երեք հարիւր հանդիսականաց . բոլոր օրը նուազ ածուաց ընտիր խումբ մը պիտի նուազէ թէ չոգ ենաւ ին մէջ եւ թէ հանդիսավայրն Երեկոյին շոգենաւը պիտի մեկ-

նի Մէզար պուրնուէն ժամը 10 ին , եւ վերոյիշեալ նաւամատոյցները հանդիպելէ ետեւ պիտի իջնէ կամուրջ :

Երթեալի եւ ճաշի համար տոմսի գինն է Մէկ Մէճիճ :

Նոքա որ կը փախաբին մասնակցել «ոյն կրթական հանդիսին , առանձինն կամ հանդերձ ընտանեօք , կը հրաւիրուին ստանալ մասնակցութեան տոմսն . Պահճէ՛ դարու սուճի Պօղոս եւ Յակոբ աղաներէն , Քատուր , քէօյ նաւամատոյցի Զրօտարանն , Յակոբ աղայէն , Պէշիկթաշ ծխավաճառ Գրիգոր Խալայէն , Օրթաքէօյ ծխավաճառ Մնացական աղայէն , եւ ի ձեռն կարգադիր մասնախմբի անդամոյ :

Ի դիմաց մասնախմբին

Ատենապետ

Ս.ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Հաշուակալ Գանձապետ
Ա. ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Տ. ՔԵԼԵԿԵԱՆ

ԿՆԱՅԻՆ ԲԺՇԿԱՐԱՆ

Եթէ զլուխդ ցաւի , ձիթենիին տերեւին ծուխը քիթդ ի վեր քաշէ :

Եթէ վրաս դողալ մ'ի գայ գըլխու թերթե ցաւով մը , խնձոր մը խաշէ՛ տաք տաք կեր :

Եթէ հաղաս , եւ հաղալու ատեն իրդ կուշտեղ ցաւին , թանթրաւենիին ծաղիկը խաշէ , ջուրովը կուրդդ ցողուէ , կուզես նէ՛ քիչ մըն ալ խմէ :

Եթէ կերածդ չկրնայ մարեղէն ստամոքսդ ցաւի , գաւաթ մը օղիի մէջ քիչ մը սև պղպեղ խառնէ խմէ : Գորի «աստիկ ցաւի համար ալ այս դեղը կրնայ դորժածուիլ :

Եթէ պիգութիւն ունենաս , եւ այս պատճառաւ անհանգիստ լինիս , պղտիկ դաւաթ մը ձէթ խմէ , վրայէն ալ քիչ մը խաշիլէ բերանդ նետէ :

Եթէ կողերդ եւ մէջքիդ ոսկորները կը ցաւին , հողէ նոր ամանի մը մէջ տաք ջուր լից , լաթի մը մէջ վաթթէ երկու սրունքիդ մէջ տեղը դիր պառկէ :

Եթէ ականջդ ցաւի կամ եթէ կէս գլխու ցաւով անհանգիստ ես , քիթդ ի վեր քիչ մը աղ քաշէ :

Եթէ հարբութեն ձայնդ մարերէ , դուխդ ալ կը ցաւի , քիչ մը որդան կարմիր (գլրմը) վրայ լիւմօն մը քոմէ , առջի իրիկուընէ առաջ դիր , հետեւեալ առաւուն անօթի փութութիւնով խմէ : Եթէ ստամոքս սըղ չի վերցնէ այդ դառն դեղը , քիչցնելու է մինչեւ որ վարժի վերցընել :

Եթէ դուխդ սաստիկ կը ցաւի , այնպէս որ՝ ցաւէն աշուրներդ չես կրնար բանալ , գլուխդ չուան մը փաթթէ եւ մէջէն փայտ մը անցունելով՝ ուժով մը դարձուր ճատկիդ երակները պայթելու սաստիճան :

Եթէ անոնք որոնք կը ցուին, կան-
կաւին տերեւը լաւ մը ծածկէ լաթի
մը վրայ քաշէ փորիդ վրայ կապէ:

Եթէ «սղա-ճանկեր» ստը ելած են,
41 հատ սխտորի պէտք չունեն ան-
ցուր փորիդ ի վար կախէ և տունն ա-
տեն հոտաւրաւ, «սղա-ճանկեր» հոտէն
բոյններին կը վերադառնան և մէյ
մ'ալ չեն համարձակիր անկէ դուրս
ելնելու: Բայց ուշ գործիւն ընե-
լու է որ սխտորի պէտքները ճիշդ 41
հատ ըլլան, ու երկն մնաւ է, անկէ
պակասն ալ ոգուտ չընէր:

Եթէ դիտու ցաւով երբեմն եր-
բեմն քիթէդ արին հոսի, քիթէդ
մաղբը փրցնելու աստիճան քաշե-
լու է:

Եթէ փորիդ ստէպ լեօտի, «սղա-
կեր» եղած են, ձգելու չի դար, դարմա-
նը փութացնելու է: Մտաւճառէն
«սղա-կեր» մը առ, 24 ժամ պորտիդ վը-
րայ կապէ, յետոյ տանդ օճախին
մէջ տեղէ մը կախէ:

Եթէ կարիճ մը, կամ մեղու մը
և կամ ո՛ր և իցէ միջոտ մը խայթած
է քեզի, խայթած տեղը թուք քսէ:

Եթէ մէկը յանկարծական եր-
կիւղ մը կրէ, բերնին մէջ երեք ան-
գամ լընելու է:

Եթէ կերածդ չմարսած դուրս
տաս, Բաշկը «սղա-կեր» ստամոք-
սիդ վրայ կապէ:

Եթէ վրայ մարելիք դայ, մեծ
դաւաթ մը ջրի մէջ ափ մը պաղ մն-
ելիք ից խմէ:

Եթէ ստէպ քրտնիւ և այս պատ-
ճառաւ ու ժէ լոյնաս, ստամոքսդ
տկարանայ, դուրսդ ծանրանայ և
ստամոքսի հազ մը կուշտերդ ցաւոյն,
ու երկնին տերեւը ծածկէ թթու մա-
ծունին հետ խառնէ բազկերակիդ
կապէ, աղատեցար նէ՛ բազկիդ,
եթէ չաղատեցար կէտ բազկիդ:

Զ Ո Ւ Ա Ր Ճ Ա Լ Ի Ք

ԱՌՏՆԻՆ ՏԵՍԵՐԱՆՆԵՐ

Գեղեցիկ Ունկնդիրներս,

Անհուն բերկրութիւն զգացի ի-
մանալով ձեր բարկութիւնն վերջին
դատաւարութեանս վրայ: Կը վախ
նայի որ չպիտի բարկանայիք և դա-
տաւարութիւնս սուանց աղեղեցու
թեան պիտի մնոր: Ուղղութեան
ճանրուն մէջ մտած է այդ կիներ որ
կը բարկանայ իւր խելութիւններն
իրեն մատանի ընող անձին դէմ:
Անուղղայ է այն կիներ որ պաղ ար-
եամբ և կատարեալ անտարբերու-
թեամբ մտիկ կընէ իւր պակասու-
թիւններն իրեն ցոյց տուողին խօս-
քերը: Կանայք ընդունած են արդէն
ինչ որ կը հերքեն և հերքած են
այն որուն հաւանած են: Պարտու-
թիւն խոտովանիլ յայտնապէս քա-
ջերու գործ է: Կանայք տկար են:

Եթէ յաղթելով կը յաղթուին և յաղթը-
ւելով կը յաղթեն:

Շարունակեցէք ուրեմն մտադիր
լինել խորհրդածութեանցս որ նպա-
տակ ունին ձեր երջանկութիւնն ու
բարօրութիւնն, ձեր ներկային ու
ապագային բարեկաւութիւնն, ամուս-
նութեանց յաւելումն եւ թեթեւո-
թեանց բարձումն:

Կանայք:

Առանց հոգւոյ գեղեցկութեան
ոչինչ է մարմնոյ գեղեցկութիւնն:

Միօրինակութիւնը ձանձրոյթ կը
պատճառէ և յաճախ քուն կը բերէ:
Պէտքսովութիւնն է որ հոգւոյք և դար-
ժումն կը ծնան:

Մէկ կիներ մի օրինակ գեղեցիկ
կրնայ լինիլ, կրնայ վարդ մ'ըլլալ,
բայց չկրնար միանգամայն մա՛նուշակ
չուշան, չահպրակ, «սղա-կեր» և «սղա-
կեր»:

Ամեն օր վարդ հոտաւրաւն ո-
չինչ հոտաւր է:

Հոգւոյ գեղեցկութիւնն է որ
միօրինակ չէ, ամեն օր վերափոխ կը
ծնան: Նոր հրապոյններով, նոր խոյր
կառնու, նոր բոյր կը բուրէ, եր-
թալով կերթայ կը գեղեցկանայ, կը
հրապուրէ, կը դիւթէ, կը յափշտա-
կէ, կը տիրէ և կը գահակալէ:

Ինչո՞ւ ուրեմն զոհէք հոգւոյ
գեղեցկութիւնն մարմնոյն: Ինչո՞ւ
տկարացնէք դուք զձեզ: Ինչո՞ւ
կընծա՞ ձեր ամենէն տկար զէնքովն
պատերազմիք, յաղթուիք և զիտ
վշտացունէք: Մինչդեռ պատերազ-
մելու հարկին մէջ բնաւ չպիտի տես-
նէիք զձեզ էթէ ձեր զօրաւոր զէն-
քով պառնաղինուէիք: Ամենէն ա-
ւելի բմբուսներն և տղատամբնե-
րն ծունր պիտի դնէին, երկիր պի-
տի պաղնէին ձեզի և ոչ ոք պիտի
ստիպուէր եղջիւր ածել:

Շատ անգամ կը սխալիք դուք
կարծելով թէ ձեր ամուսիններն կը
զրանան ձեզ յարգանքն որուն ար-
ժանի էք: Կը մոռնաք դուք թէ
կատարեալպէս կը պակսի ձեզ այն
որուն համար յարգուիլ կուզէք:
Մի միայն մարմնոյ գեղեցկութեամբ
թագաւորել կուզէք:

Քիչ մը առաջ ըսի ձեզ թէ միօ-
րինակ է մարմնոյ գեղեցկութիւնն
իւրաքանչիւր կնոջ վրայ, սակայն
մոռցայ ըսելու թէ մարդու երբ ըս-
տանայ այն որուն համար կը բոբբո-
քէր, կը կշտանայ:

Յազ եցողութիւնը կը ջնջէ անօ-
թութիւնը:

Անօթութիւնն փափաքն է:
(Կարծես չիքթօր իւկոյի պէս կը
խօսիմ կոր)

Գեղեցիկ Ունկնդիրներս, ըրէք
այնպէս որ ձեր ամուսիններն միշտ
անօթի մնան, ձեզմէ ստանալու
բան մ'ունենան միշտ: Յազ ենան և
անօթ ենան: Անօթութեամբ յազե-
նան . . . յազ եցողութեամբ նօթի
մնան . . . :

Փոթառեցէ՛ք ուրեմն հոգւոյ
գեղեցկութեան:

Մի՛ խաբարէք այն երիտասարդ-
ներէն որ զձեզ կը չողորթեն և
զձեզ չողորթելով ձեր տանն խա-
ղաղութիւնը կը խռովեն: Ուրիշներէ
չարունակ և տարապայման չողորթ-
թութեամբ կը կարծէք թէ կանպատ-
ուիք ձեր ամուսիններէն: Կուզէք
որ, ձեր ամուսինն ամեն երեկոյ
աուն մանեղուն ձեզի ըսէ:

— Ո՛հ իմ ազգայնիկ կնիկ . . .
ոհ իմ նոնօշիկս . . . արեւու դեռ
նիւմ . . . այսօր ոչափ աղուոր ես . . .
ես արժանի չեմ քեզի պէս աղուոր
կնկան մի . . . գերիդ ըլլամ:

Եւ երբ ամուսին մը թերանայ
այս արարողութեան մէջ՝ կ'կսիք
տունը տակն ու վրայ ընել և պո-
ռալ:

— Ինչ ըսեմ ես իմ «և բախ-
տի», տխուր ճակատագրիս որ անդ-
դայ մարդու մը ձեռք ինկայ. եթէ
ուրիշ ամուսին մ'ունենայի՝ թագ ու հ-
ւոյ պէս կ'եմք կանցունէի, վայ ինձ,
վայ ինձ, վայ ինձ . . .

Մի՛ լաք, մի՛ լաք, որբեցէ՛ք
ձեր արտասուքն և ուրիշ տունն տ-
ռիթ մի՛ տաք ինձ դրեւ հետեւեալ
տեսարանները:

— Կնիկ, սա կերակուրը բեր
ուտենք:

— Հելէ նստէ քիչ մը:

— Անօթի եմ:

— Քիչ մը երեսո՛ւ նայէ՛:

— Ինչ նայիմ, անօթի եմ հի-
մայ:

— Անօթի, անօթի, հայվանի
պէս մարդ մ'ես տտամ: Այ
փողոց ելայ և մինչեւ որ ո-
ձայ նէ ես գիտեմ քաշած
չմնաց որ ժամերով երեսո-
ղուն ինչ անդդայ մարդ ո՞ր տանկ
քիչ մը երեսո՛ւ չես նայի:

— Ես քուկին երեսո՛ւ այսօր
պիտի տեսնեմ:

— Ըլլայ թո՛ղ . . . վախ որ կըն-
կան խըյմէի չիլտես:

— Խըյմէի բան կայ հոս հի-
մայ:

— Չիլտեմ:

— Կերակո՛ւր:

— Ուտելու ակորժակ ձեզ եցի՛ր
որ ուտեմ: Ես դուրս պիտի ելամ,
դուն գնա՛ կեր:

Ուրիշ տան մը մէջ:

— Բարի իրիկուն, տիկին:

— Ատուծու բարին:

— Նրթամ սա ծաղիկներուն քիչ
մը ջուր տամ:

— Ծաղիկներն ալ դետինն անց-
նին . . .

— Ինչո՞ւ . . . կը չորնան նէ . . .

— Ես չորնալէս ետքը . . .

— Դուն ինչո՞ւ չորնաս . . .

Ինչ ըրինք դարձեալ:

— Ինչ պիտի ընես, ծաղիկնե-
րդ ինձմէ տեղի կը սիրես կոր:

— Ինչո՞ւ այդպէս կը խօսիս:

ինչո՞ւ չպիտի խօսիմ եղեր . . .
նստէ՛ք, քիչ մը քովս, անուշներ ըլլայ
ըսէ՛, այսօր բաղնիք գնացի :

— Եստ աղէկ, անուշներ ըլլայ . . .
հորին չուանը վրա՞ն է :

— Մէկ անուշներով կը լինայ . . .

— Անուշներ ըլլայ գարձեալ . . .
հորին չուանը վրա՞ն է . . .

— Նստէ՛ք, բան մը պիտի պատ-
մեմ :

— Հորին չուանը . . .

— Բաղնիքին մէջ չես հարցնէր
ինչեր եղաւ այսօր . . . քիչ մնաց կը
ճաթէի կոր . . .

— Ինչո՞ւ :

— Ինչ գիտնամ . . . վրաս գէ-
շաթիւն մ'եկաւ . . .

— Պատճառ :

— Պատճառ նաղար է եղեր . . .
լեւիւցողն էր բաղնիքը . . . աս ինչ
աղուոր կնիկ է . . . աս ինչ հրեշտա-
կի պէս կնիկ է . . . աս ինչ մար-
մին է . . . ատ ինչ հասակ . . . ան
ինչ ճերմկութիւն . . . ատ ինչ վի-
րճի պէս կէնճ է, այնչափ ըսին որ
աչքով պիտի ուտէին զիս : Բաղնե-
պանն եկաւ, շուտ մը դուրս հանեց,
հագցուց ու մէյմալ սասնկ խալա
պալլելի մէջ մի՛ մանար աղջիկս ըսաւ :

— Անցած ըլլայ անանկ է նէ :
Սա հորին չուանը . . .

— Ասանկ գեղեցիկ կին մ'ունիս
տէ . . . ահ, իմին տեղս ուրիշ մը
ըլլար նէ՛ք, քուկին գլուխդ շատ փո-
ճանքներու կը հանդպցունէր ամա . . .
աղօթք ըրէ քի ես քիչիդատէ եմ տէ,
չեմ կրնար ընել . . . զաթը դուն
կնիկդ հիշ սիրած չունիս որ . . .
մեղք ինձի, մեղք . . . երուեցայ,
երուեցայ :

Անցնինք ուրիշ տուն մը . . .

— Բարիկուն կնիկ . . .

— . . .

— Բարիկուն կնիկ . . .

— . . .

— Ինչո՞ւ չես խօսիր :

— Ինչո՞ւ պիտի խօսիմ, եթէ
հետս միշտ այսպէս վարուիս՝ քիչ
ատենէն կնիկդ ձեռքէդ պիտի ելլայ :

— Ինչո՞ւ :

— Բան մը կերած չունիմ, քնա-
ցած չունիմ, գլուխս կը դառնայ,
ժուռկերս կը դողան . . . օր մը օ-
րանց հարցուցած չունիս որ կնիկ
ինչու կը նիհարնաս կոր :

— Ինչո՞ւ կը նիհարնաս կոր :

— Քուկին վարմունքդ ինձի պի-
տի մեռցունէ :

— Ինչ բրնձեղի . . .

— Ինչ պիտի ընես, իրիկուն մը
եկուր տէ սանկ անուշ խօսք մը ըրէ՛ :

— Չեմ ընէր կոր :

— Գալուդ պէս թափուխներու դ-
քովը կերթաս . . . թափուխներդ
իզմէ աւելի կը հոգաս :

— Աս ալ խօսք է հիմայ :

— Ուրիշները քեզմէ աւելի կը
յարգեն զիս : Այսօր տուն մը գնա-
ցի՝ նստեցնելու տեղ չկրցին գտնել . . .
դուն երես չես նայիր :

— Ձիյտես որ քեզի համար կը
մեռնիմ ես :

— Ատանկ բան մ'ըսած չունիս նէ :

— Սրտանց կը սիրեմ ես :

— Սրտանց սիրելն ինչ ընեմ
ես, մարդս քիչ մ'ալ անուշ խօսքե-
րով սիրելու է : Ամա իմ թալէհէս է
ան որ քաշեմ : Այսօր պատուհանը
նստեր էի, երկու երեք հոգի ան-
ցան և անանկ ուշադրութեամբ երե-
սքս նայեցան որ կը վախնամ քի չը
փախցունեն զիս ասկից . . . աղուոր
ըլլալն ալ պէ՛տ է եղեր . . . քէչկէ
քիչ մը չիրքին բլլայի ու կարենայի
պատուհանին առջիւ նստիլ : Ինչ ան-
կիրթ մարդիկ կան եղեր . . . անանկ
նայիլ մը ունին քի կարծես թէ պիտի
ուտեն . . . արարատ աշխարհ կը
խենթեցայ վրաս, միայն գուն բա-
նի տեղ չես գներ զիս :

Ահա ասոնք են այն կիներն որոյ
կը պակսի հոգւոյ գեղեցկութիւնն :
Թերեւս առարկուի մեղ :

— Հոգւոյ գեղեցկութիւն, հոգ-
ւոյ գեղեցկութիւն, հոգւոյ գեղեց-
կութիւն մ'աւեր կերթաս, պար-
տէղներու մէջ, հրապարակներու
վրայ ինչպէս ցուցներու է հոգւոյ
գեղեցկութիւնը, երիտասարդները
հոգւոյ գեղեցկութիւն փնտռած ու
նիսն . . . հոգիին վրայ բարձր և
վարժապետ կը զրկի . . . հոգիին մէջը
դուռնէն կը կապուի . . .

Կը հաւանիմ որ այսօրմա՛տ որ
օրիորդները մարմնոյ գեղեցկու-
թեամբ գրաւեն, բայց հոգւոյ գե-
ղեցկութեամբ տիրեն : Երբեք՝ ա-
մուսնանալէ յետոյ կանայք հոգւոյ
գեղեցկութեամբ միայն փայլելու
են : Ուրիշ երկիրներ գրաւելու պէտք
չունին այլ ևս, այլ պահպանելու
պարտաւոր են այն զոր գրաւած են
և այն որուն տիրացած են արդէն :
Կարգուելն ետքը պարտաւոր են
մինչև անգամ տգեղացնել իրենց
մարմինն ի պատիւ և ի փառս իւր-
եանց ամուսնոյն և զաւակաց :

Անգամ մը միայն յաղթանակ
տանելու է կին մը :

Աշխարհակալութիւնը կանանց
համար չէ :

Ֆ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ

2 թիւ շրջեան

17 Յունիս 1887

ԱՄՈՒՍԵՆՈՒԹԻՒՆ ՄԸ

Ազնուական մեծատուն մը ու-
ղելով իր աղջիկն ամուսնացնել, հե-
տեւեալ աղբը հրատարակել կուտայ
լրագրաց մէջ :

“ Ստորագրեալս կուղեմ ամուս-
նացնել աղջիկս, որուն իբր գրամո-

թիտ հազար անգ զիական ոսկի պիտի
տամ : Դիտարողք կրնան դիմել առ-
իս և հետեւաբար տեսնել աղջիկս : ”

Հետեւեալ օր առաւօտուն կա-
նուխ մեծատան դուռը ամի կառնուի,
հարուստ երիտասարդ մը կը ներ-
կայանայ հօրը և կը խնդրէ որ աղ-
ջիկն իրեն ցուցնէ :

— Մեծաւ հաճութեամբ, կը
պատասխանէ ծերունին և հրաման
կընէ որ աղջիկն ի տես հանեն :

Երիտասարդը աղջկան վրայ հա-
րեանցի ակնարկ մը ձգելէն յետոյ՝
կը դառնայ կընէ հօրը :

— Եստ լաւ, կը յիշէք անշուշտ
խոտու մնիդ :

— Տարակոյս չկայ կը պատաս-
խանէ մեծատունը ժպտելով, բայց
խնդրեմ, առէք նախ այս թուղթն
ու գրիչը և հաճեցէք գրել ինչ որ
պիտի ըսեմ ձեզ :

Երիտասարդը դարմանալով այս
տարօրինակ առաջարկութեան վրայ
և չը համարձակելով սակայն դիտու-
ղութիւն մը րնել, կը հնազանդի ան-
համբեր գործին վախճանին սպասե-
լով :

— Հիմա, կընէ ծերունին, դուք
եկած էք իմ աղջկանս ձեռքը ուղեղու-
կը հաւանիմ, այլ սակայն պէտք է
գիտնալ թէ՛ աղջիկս՝ որ իմ հարս-
տութեանս միակ ժառանգորդն է,
իբր գրամոթիտ իւր հետ հազար ոս-
կի բերելով հանդերձ՝ օժտուած է
արդէն բարոյական ինչ ինչ առաւե-
րութեամբ, և զորս ես պիտի թըւ-
եմ և դուք պիտի նշանակէք :

— Խիստ աղէկ, կընէ երիտասար-
դը, ևս քան զեւ զարմացած, թուե-
ցէք :

— Եթէ դուք ամուսնանաք իմ
աղջկանս հետ, պարտաւոր պիտի լի-
նիք զինքն այնպէս մը խնամել, որ
բնաւ չյիշէ իւր ծնողաց տունը, ուր
այնչափ փափկութեամբ սնաւ ու
մեծցաւ . . . : Նախապէս, Աստուծոյ
յապագայ ջրին Ձեզի պարզ եւելիք զաւ-
կին համար պարտիք ստնտու — դայ-
եակ մը յատկացնել, որ մինչև հինգ
տարի զաւկիդ խնամէ : Խոնտու
դայեակի մը առ նուազն տմիօր 8
ոսկի ամսական վճարելու է, 3 տա-
րին քանի՞ ոսկի կընէ :

— 180 ոսկի :

— Նշանակէ ուրեմն չորս հար-
իւր ութսուն ոսկի ամսական-դայեա-
կի համար :

— Կնոջ համար սպասուհի մըն
ալ հարկ է, այդ սպասուհւոյն գոնէ
3 ոսկի ամսական վճարելու էք, տա-
րին քանի՞ ոսկի կընէ :

— 36 ոսկի :

— Սպասուհի մը մինչև վերջը
պէտք է ձեզ, բայց մենք առ այժմ
հինգ տարույ համար երթալիք ծա-
խուց համագումարը գտնենք, ամի-
սը 3 ոսկիէն հինգ տարին ո՛րքան
կընէ :

— 180 ոսկի :

— Գրէ ուրեմն հարիւր ութսուն
ոսկի սպասուհւոյ մը համար :

— Խոհարար մ'ալ հարկ է ձեռք
այնպէս չէ՞ :

— Անշուշտ, այդ եւս հարկ է :

— Վարպետ խոհարար մը եօ-
թըն ոսկի ամսական կը պահանջէ .
դուք դրնք 5 ոսկի , 5 տարուանը
ո՞րքան կընէ :

— 300 ոսկի :

— Նշանակեցէք 300 ոսկի եւս
խոհարարի վճարելի :

— Աւելորդ համարելով մի առ-
մի թուել այլ եւ այլ մանր մունր
ծախքերը որք մէկ տարուան մէջ
իբր 300 եւ աւելի ոսկույ գումար մը
կը կազմեն, բայց դուք նշանակեցէք
միայն 300 ոսկի , ո՞րքան ըրաւ բո-
լորը :

— 1260 ոսկի ճիշդ :

— Այդ, կըսէ ծերունին , հրա-
ման պիտի ընեմ արկղապետիս որ ա-
մուսնութեան դաշնագիրը երկուս-
տեք ստորագրուելէ յետոյ ձեզի ան-
միջապէս 1000 ոսկի համարէ : Բայց . .
պէտք է գիտնալ թէ հինգ տարիէն
այդ գումարը ձեզի չլինել տուած
ցուցակիս համեմատ ամբողջովին
ծախսելէ ետքը ունենաք կամ ոչ
260 ոսկի եւս վրայ պիտի տաք, այն-
պէս չէ՞ :

— Այո՛ , կը պատասխանէ երի-
տասարդը սիրտը սեղմուած, հաշիւը
ճիշդ է, եւ կը պարտիմ այդ պակա-
սը լրացնել որոյ համար այժմէն կը
խոստանամ ձեզ :

— Հորեկ չէ, որդեակ, 260 ոսկ-
ւոյ պակասը լրացնել , ժամանակս
անձուկ է , ապահով եղիք, եթէ իմ

աղջկանս հետ ամուսնանաք , ոչ ըս-
պատուհոյ պէտք պիտի ունենաք, ոչ
ստնտուի, ոչ խոհարարի եւ ոչ ումեք,
քանզի , իմ՝ դստրիկս փափաքող է
Աստուծոյ իրեն պարզ եւելիք զաւա-
կին ինքն անձամբ դիմեցնել եւ իբրեւ
ճշմարիտ մայր իր խնամոց տակ մեծ-
ցընել զայն, առանին ծառայութիւն-
ներն իբրեւ տան տիկին աղայ հասա-
կէն սկսեալ սովորած է ընել անձամբ
տնտեսագիտական տեսակէտով խո-
հարարի ամսաթուղակ վճարելն իբր
աւելորդ ծոխք մը համարելուն, մեծ
հաճութեամբ եւ ամենայն խնամով
իւր իսկ ձեռքը կը պատրաստէ կե-
րակուրները, որով խոհարարի հարկ
չի մնար ձեզ :

— Սքանչելի՛ բան, յետո՛յ :

— Յետոյ, համարէ թէ, որդեակ,
1000 ոսկին արդէն ընդունած ես եւ
5 տարուան մէջ այդ գումարը ամ-
բողջապէս խարճած ըլլալով՝ վրայ
տուած ես 260 ոսկույ գումար մը եւս
որ բացէն չա՛հ մը համարելու էք
ձեզի, քանի որ իրապէս չէք խար-
ճած զայն , ամուսնութեան դաշնա-
գիրը կ'ստորագրէ՞ք :

— Ամենեւին ոչ, կը պատասխա-
խանէ երիտասարդը դժգոհ դէմքով
մը, ես հաստատապէս կը յուսայի թէ
դուք ձեր խոստումը պիտի կատա-
րէք, զիարդ եւ իյէ այդ «համարէ»
ները իմ դործիս չեն յարմարիր ,
մնաք բարեաւ :

Այսպէս 1000 ոսկույ ջերմ սի-
րահայ երիտասարդներ կը ներկայա-
նան հետզհետէ հօրը , որ նոյն տար-

օրինակ հաշիւն անվրէպ ամենուն
ցոյց տալուն՝ ոչ ոք կուզէ նորա փե-
սայն լինիլ եւ կը մեկնի :

Հուսկ ապա կը ներկայանայ մի
բարդկիրթ եւ ուշիմ երիտասարդ, ա-
սոր ալ կառաջարկուի նոյն հաշիւը,
զոր ամենայն սիրով եւ հաճութեամբ
ընդունելու պատրաստ լինելն յայտ-
նելով, փափաք կը յայտնէ միան-
գամայն ամուսնութեան դաշնագիրն
ստորագրելու :

Մեծատունը՝ այս վերջնոյն յայտ-
նած սոյն փափաքանացը վրայ խան-
թակաթ սիրով կը գրկէ զանի, համ-
բոյր մը կը դրոշմէ նորա ճակարն
վրայ, ու կըսէ. որդեակ իմ , դուք,
որ առաւել իմ աղջկանս բարոյական
առաւելութեանցը սիրահարեցաք
քան ի՞նչ նորա 1000 ոսկւոյն, զոր տալ
խոստացած էի, ուրեմն արժանի էք
իմ փեսայս կոչուելու , բայց ապիկց՝
ոչ եթէ իբր դրամոժիտ այլ իբրեւ
դուզնաբեայ նուէր մը յինէն առ-
ձեղ կուտամ 2000 անգ զիական ոսկի :
Գ. Կ. Փ.

Հրատարակեցաւ ՀՆՁԱԿ զաւեշ-
տատետրի Դ. Հատորի Ա. թերթը,
պատկերազարդ :

ՔԱՂԱՔԱԿԱՆ

(Աճեցողութեան շաբաթական)

Սերդիւն . — Գ. Ռիսդիլի՝ նախարա-
րութեան գլուխ անցնիլը եւրոպական լը-
րագրաց մէջ խորհրդածութեան առատ
նիւթ կը մատակարարէ : Միւսն թագա-

— 424 —

պատասխանեց Օռէլի ուրախութենէն ժըպ-
տելով եւ աջերն խոնարհելով . ինձ խիստ
հաճելի շողորթութիւններ ընելով չէ՞ք
չփոթիր այժմ :

— Շողորթութիւն, Տէրիմ յետուած,
այդ ինչ աղեղ բառ է , ստուգիւ տիրուհիք
պէտք էր ուրիշ բառ մը հնարել, երբ խըն-
դիրն դովետալից եւ անկեղծ մտածում մը
բայատրելու վրայ է : Երբ ըսենք թէ աղա-
մանդը փայլ ունի , վարդն թարմութիւն եւ
քաղցր բուրում՝ շողորթութիւն ըրած կըլ-
լանք : Վերջապէս օրիորդ, միթէ , երբ յաւ-
քունիս ներկայացնեմ զձեզ , եւ ողորմելի
Լիւսան մարքիզուհին, եւ Մօրէնիլի անբաղդ-
դեսուհին , որք այժմ գեղեցկութեանց թա-
ղուհի կը համարուին , շողորթութ եղած պի-
տի ըլլան , երբ զձեզ տեսնելով օրիորդ Օռէ-
լի , պիտի խոստովանին այդ հրաշագեղներն
թէ դահլիճեց եղած են իւրեանց թագուհի-
ւոյ դահլիճն :

— Ստուգիւ , պարոն կոմս , — պատաս-
խանեց տիկին ժուֆրուա , իւր մայրենի սը-
նափառութեան մէջ այնքան անհաւատալի եւ
անկեղծ յափշտակութեամբ մը՝ որ աչերն ար-

եւ զայն անվրէպ փոքր տեսնելով իւր խօսքն՝ յաւելցուց :

Բարեբաղդաբար օրիորդ Օռէլին խօս-
քերնիս չը լսեր , այնքան պարկեշտ է նա որ
ամեն արժանի գովեստներէն իսկ խոյս կու-
տայ :

— Յիշաւի , բարեբաղդութիւն մ'է որ
ձեր խօսքերն չեմ լսեր . — յարեց Օռէլի
զուարթաբեր , ապա թէ ոչ պիտի հարցնէի
ձեզ թէ ինչպէս կըցաք գտնել այդքան
բարեմասնութիւններ մէկ հակապարի մը մի-
ջոցին :

— Ահ , օրիորդ , չէ՞ք ուղեր հաւատալ
խօսքիս . . .

Լաւ ուրեմն , ինքզինքս պիտի պաշտ-
պանեմ : Տիկին մայրերնիդ դատաւոր պիտի
ըլլայ մեզ :

— Այո , կերպնում ձեզ , պարոն Հան-
րի որ դատողութեանս մէջ բնաւ կողմնակ-
ցութիւն չը պիտի ընեմ :

— Այսպէս , օրիորդ Օռէլի կը զորմա-
նայ թէ ինչպէս հակապարի մը տուած ժա-
մանակին մէջ կըցայ ճանչնալ , զնահատել
իւր գեղեցկութիւնն , մտաց շնորհն եւ բա-

ւորին հրաժարման վերաբերեալ լուրեր կը շրջին. Ն. Վահագնաւորութիւն այս միջոցիս Վիէննա կը գտնուի :

Փաշէլ. — Երեսփոխանաց ժողովը մերժեց առաջարկ մը որ կը պահանջէր զինուորական ծառայութենէ զերծ կառուցանել կղերական զարոյցաց աշակերտներն եւ ուսուցիչները :

Անդլէս. — Թագուհւոյն Յորելեանի առթիւ հանդէսները կը շարունակեն. այս պատճառաւ օրուան քաղաքական խնդիրք առկաի կը մնան :

Ռոսէ. — Սերպիոյ մէջ կատարուած նախարարական փոփոխութենէն յոյժ գոհ է, եւ այս բան կը նկատէ նախափորձ մը ի Պալքանս իւր ազդեցութեան զօրանալուն :

Գերմանիա. — Վիլհելմ կայսրը վերստացաւ իւր առողջութիւնն, բայց Պիզմարք իշխանն այժմ հիւանդ է :

Պուլկէ. — Կըսուի թէ Խնամակալը պիտի հրաժարին եւ Սօպրանիէն միակ Խնամակալ մը պիտի ընտրէ :

Կիւրէ. — Կրէտական խնդրոյն վերաբերեալ բանակցութիւնք բարձ. Մեծ Եպարքոսին եւ Պատուիրակաց միջեւ կը շարունակին ի Բ. Գոռն :

Բանթ. — Վեհ. Սուլթանին հրամանաւ, ռաիկանութեան նախարար Վահագն Գեամիլ պէյ ծրագիր մը կը պատրաստէ ի մասին նորոգ կաղմակերպութեան մայրաքաղաքին եւ գաւառաց բանտերու :

Անգլի. — Գաւառաց մէջ տեղ տեղ անձրեւ եկած է :

Ս. Գ. — Ի Կիլիկիա սովի վերաբեր.

եալ տեղեկութիւնք դժբաղդաբար ստուգութիւն կը գտնեն :

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Խառն ժողովոյ որոշմամբ Ամեն. Ս. Պատրիարքն առ Վսնայ Պատր. Փոխանորդն Գեր. Ալէքսիան զրեց յետաձգել Գաւառական Երեսփոխանական ժողովոյ ընտրութիւնն մինչեւ որ կուսակցական վէճերը զաղրին եւ կըքերն հանգարին :

— Տիգրանակերալ կրօնավարութեան վերաբերեալ տեղեկութիւնք կը հասնին ի Պատրիարքարան. Գեր. Գերձակեան Մշոյ վանքը կը գտնուի եւ չուղեր եղեր երթալ ի Տիգրանակերտ : Իւր այս ընթացքն անմեկնելի է :

— Պուլկարիոյ նորընտիր Առաջնորդ Ռուսնուզեան Գեր. Տ. Ծ. Վարդապետը կը պատրաստուի ի մօտոյ իւր պաշտօնատեղին ուղեւորիլ :

ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

Անցեալ կիրակի օր կատարուեցաւ Տատեան Վսեմ. Տիրան պէյի նորածին զաւկին մկրտութիւնն ի ներկայութեան Գեր. Տ. Խորէն Նար-պէյ Սրբազանի, Գեր. Տ. Յ. Մկրեանի, Պէշիկթաշի քահանայական դասուն եւ բաղմամբիւ երեւելի

աղագանոց եւ կնքահայրութեամբ Չայեան Վսեմ. Խլիսս էֆէնտինի :

Նորածինին անունը Մարիամ Աղինէ դրուեցաւ :

ՆՇԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Անցեալ կիրակի օր տեղի ունեցաւ Արեւելքի Վարչական Խորհրդոյ անդամ, փաստարան Մեծ. Յակոբ էֆ. Յ. Յակոբեանի նշանախօսութիւնն ընդ Ազն. Օրթերուզիկ Պատմաճեանի, զուստր Մեծ. Պաղտիկ էֆ. Պատմաճեանի :

ԵՐԿՐԱԳՈՒՆՏ

Հրատարակեցան Յունկար, Փետրուար, Մարտ եւ Ապրիլ ամիսներու թիւերը :

ԱՐՏՕՆԱՏԵՐ Մ. Յ. ՄԵԼԻՔԵԱՆ

ՏՆՕՐԷՆ ԵՒ ԽՄԲԱԳԻՐ Մ. ԳԱՓԱՄԱՃԵԱՆ

— 422 —

ըեսրաութիւնն : Կը պատասխանեմ թէ իւր գեղեցկութենէն հրապուրուելու համար վայրկեան մը բաւական էր ինձ, արդէն կառկած չը վերցնեմ այս : Իւր բարեսրտութեան դաւով, յուսամ թէ պիտի համաձայնիք ինձ, տիկին, եթէ ըսեմ թէ՝ կարծեմ, ծաղկի մը բուրումը չնջել բաւական է, նորա անուշահոտութիւնը գնահատելու համար :

— Այդ յայտնի է, պատասխանեց տիկին ժուֆրուա, այս փաղաքշանքէն յալըտակեալ. խիստ ակներեւ է այդ :

— Ոհ, կը տեսնե՞ս մայրիկ, պարոն Հանրիի նկատմբ կողմնակցութիւն ցոյց կուտաս :

— Շնորհք ըրէք, օրիորդ Օռէլի. ձեր տիկին մօր վրայ աղքեցութիւն մի բանեցնէք : Արդ, ձեզ կը յիշեցնեմ թէ, երէկ գիշերքանի մը բաւեր արտասանեցիք որք այնքան լաւ երեան կը հանեն ձեր բարեսրտութիւնն որքան բուրումն ծաղիկ : Դեռատի աղջիկ մը, բաւական տղեղ եւ խիստ ծաղրաշարժ կերպիւ զգեցած, մեր պարած քառախաղին (քատրիլ) մէջ կը պարէր, քանի մը ծաղրական խօսքեր ըրի իւր վրայ, խօսքս ընդմիջեցիք օրիորդ, սրտայոյզ շնորհօք իմն ըսե.

— 423 —

ըով ինձ. — « Եհ, պարոն այդ դեռատե աղջկան մայրն հոս է, մեր ետեւն. . . կըրնայ ըլլալ որ խօսքերնիդ լսէ. որչափ վիշտ կը պատճառեն իրեն ձեր խօսքերն. » այժմ տիկին ձեզ կը հորցնեմ, այդ խօսքերն չե՞ն բաւեր զայն արտասանող օրիորդին բարեսրտութիւնն ապացուցանելու :

— Օռէլի, իրաւ է ըսածն :

— Այո՛, մայրիկ :

— Ապա ուրեմն, ստիպեալ եմ, պարոն Հանրիի դատաւորութիւն ըլլալու իրաւամբ ըս. հակառակ աղջկան՝ իրաւունքը ձեզի տալ. . . ինչ աղջիկս, իրաւունքն անորն է :

— Այժմ կը տեսնէք, տիկին, թէ իրաւունք ունէի բանելու թէ իմ միակ արժանիքս յայտն կը կայանար որ խոր կերպիւ յալըտակուած էի օրիորդ Օռէլի բարեսրտութենէն որոյ հաւասար էր իւր գեղեցկութիւն : Այս պատճառաւ, երբ իմացայ թէ բարեսրտած էք խնդիրքս ընդունիլ, այնպիսի վրդովում մը եւ շփոթ մը զգացի, զոր մարդ իւր չաւ կընկալած եւ արժանի չեղած մէկ երջանկութեան հասնելուն կղզայ :

— Եթէ զայդ իմանալով չփոթած էք.